

Մշակութային պայքար Հայաստանի և Ադրբեջանի միջև

Ո՞վ ՈՒՆԻ ԱՎԵԼԻ «ՀԻՆ» ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ֆլորիան Գուբելսերգեր և Մանուել Դաուբենբերգեր



Լեռնային Ղարաբաղը 2020 թ. հոկտեմբերին. տեսարան դեպի Շուշա քաղաք, որը կարևոր է ինչպես հայերի, այնպես էլ ադրբեջանցիների համար : (imago / Itar Tass / Stanislav Krasilnikov)

Անցյալ տարի Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմը բռնի մի շարք դիմակայությունների հերթական դրվագը եղավ: Հակամարտությունը, որը գրեթե միայն պարտվողներ գիտի, թեժացվում է պատմաբանների ու հնագետների կողմից:

Պատերազմից ի վեր Ամարաս վանքի դարպասի առջև ընկած է մեկ այլ երկիր: Այնտեղ, որտեղ նախապես հայեր էին ապրում, այժմ պարեկություն են անում Ադրբեջանի զինվորները: 2020 թ. նոյեմբերի վերջն է, և մենք վանքի և, այդպիսով, առաջնագծի ճանապարհին ենք: Ուզում ենք հասկանալ, թե ինչ են ապրել զինվորներն ու քաղաքացիական անձինք այս պատերազմում: Եվ, ահա, մեր սպիտակ ամենագնացը օրորվում է դեպի վանք ճանապարհի վերջին մի քանի մետրն ի վար:

Առաջնագիծն այնքան կիպ է անցնում վանքի պարիսպների երկայնքով, որ մոտակա քաղաքի բնակիչները վստահ չէին՝ արդյո՞ք կարող են մեզ՝ գերմանացի երկու լրագրողներիս, հանգիստ խղճով ուղարկել այնտեղ: Միայն մի քանի օր առաջ համաձայնեցված հրադադարը կպահպանի՞: Ձինվորները կկրակե՞ն: Վանքն ականապատված է:

Պատերազմի 44 օրերը Լեռնային Ղարաբաղի՝ Կովկասի սրտում լեռնային շրջանի հասարակության անցյալում են: Հայաստանի ու Ադրբեջանի կողմից պահանջվում է Մալյորկայի մեծության հողը: Այդ՝ երեք տասնամյակ շարունակվող հակամարտությունում վերջին էսկալացիան նորից հազարավոր կյանքեր արժեցավ: 2020 թ. նոյեմբերի սկզբին պատերազմը վերջանում է Ադրբեջանի հաղթանակով և Ռուսաստանի միջնորդած հրադադարով:

Մինչ մեքենայից իջնելը, շրջակա բլուրների վրա նկատում ենք ադրբեջանցի զինվորների: Իրականում, այլևս մարտեր չեն մղվում, բայց դատարկության զգացողություն է առաջանում: Վանքի բնակելի սենյակների պատուհանները ծածկված են կտորե վարագույրներով: Վանքը պաշտպանելու համար այստեղ տեղակայված հայ զինվորները, հավանաբար, կախել էին դրանք՝ դիպուկահարների կողմից չթիրախավորվելու համար:

«Ես չէի ցանկանա խոսել պատերազմի մասին: Յուրաքանչյուր պատերազմ վատ է, և այս պատերազմը վատ էր մեզ համար»:



Ամարասի վանքը 2020 թ. դեկտեմբերին. «Հայկական եկեղեցիները կարևոր են մեր հավատքի համար»: (imago / Itar-Tass)

Կառլեն Նազարյանը դժվարությամբ հենվում է իր սև ձեռնափայտին: Նազարյանին մենք հանդիպեցինք մի այլ կերպ լքված վանքի ներսում: Չորս ընկերների հետ նա եկավ Ամարաս՝ մոմ վառելու:

«Եկեղեցիները կարևոր են մեզ համար: Եվ այժմ, երբ այս վանքն այդքան մոտ է առաջնագծին, այն առավել նշանակալի է: Ամարասն ուշադրության և խնամքի կարիք ունի: Հայկական եկեղեցու գոհասեղանի մոմերը երբեք չպետք է մարեն»:

Նազարյանն աշխատում է Մոսկվայում՝ որպես տնտեսագետ: Երբ անցած տարվա սեպտեմբերի վերջին սկսվեց Լեռնային Ղարաբաղի վերջին պատերազմը, նա նստեց ինքնաթիռն ու վերադարձավ հայրենիք: Որպես քրիստոնյա, գրեթե բոլոր հայերի նման նա հոգս է անում ամենից առաջ վանքի ապագայի համար:

«Դա մեծ ցավ է մեզ համար, քանի որ հայկական եկեղեցիները կարևոր են մեր հավատքի համար: Եվ մշտական հավատն էր, որը կենդանի պահեց մեր ժողովրդին: Եթե մենք կորցնենք եկեղեցիները, ապա կկորցնենք հաջորդ սերունդը: Երեխա ժամանակ հայրս ինձ պատմեց Ամարասի մասին, և ես հարցրի՝ կարո՞ղ ենք գնալ այնտեղ: Եվ նա ասաց՝ դա հնարավոր է: Երբ իմ երեխան հարցնում է՝ արդյո՞ք հնարավոր է տեսնել Շուշիի Մայր տաճարը, ես ստիպված եմ ամոթից գլուխս խոնարհել, քանի որ այն այլևս մեզ չի պատկանում»:

Հայաստանի ամենամութ ժամը

Ըստ Լեոնային Ղարաբաղի հայկական կառավարչության՝ 161 վանքեր ու եկեղեցիներ և գրեթե 600 խաչքարեր գտնվում են Ադրբեջանի կողմից գրավված տարածքներում: Մարդու իրավունքների օմբուդսմենը հաշվում է վտանգված՝ հայկական ծագմամբ ընդհանուր 1456 հուշարձան, այդ թվում՝ նաև Մայր տաճարը, որի մասին խոսում է Կառլեն Նազարյանը:

Հայաստանի համար ամենամութ ժամն է: Երբ հրադադարը նախնական վերջ է տալիս հակամարտության վերջին էսկալացիային, Ադրբեջանն արդեն վերահսկում է Լեոնային Ղարաբաղի հարավի և արևելքի մեծ մասին, այդ թվում՝ Շուշին, ներառյալ՝ Մայր տաճարին: Հայերը ոչ մի բան չունենին՝ ընդդիմանալու Բաքվի՝ գերզինված բանակին, և, այդպիսով, Ադրբեջանը կարողացավ թելադրել մարտական գործողությունները դադարեցնելու պայմանները:

Ադրբեջանի համար դա տասնամյակներ ի վեր ակնկալված հաղթանակն է՝ վերանվաճում: Լեոնային Ղարաբաղը նրա պետական տարածքի մի մասն է և 1990-ական թթ. սկզբի պատերազմից ի վեր հարակից տարածքների հետ միասին գրավվել էր Հայաստանի կողմից: Այդ ժամանակ տասնյակ հազարավոր ադրբեջանցիներ մահացան: Ավելի քան մեկ միլիոն մարդ փախավ այժմ թշնամու կողմից վերահսկվող շրջաններից, իսկ Բաքվի դարպասների առաջ առաջացան վրանային քաղաքներ:

Ամարաս մեր այցից հետո մենք ցանկանում ենք հասկանալ, թե ինչ դեր են խաղում եկեղեցիներն ու մզկիթները քրիստոնյա Հայաստանի և մահմեդական Ադրբեջանի հակամարտության մեջ: Մենք շարունակում ենք ուսումնասիրել և լսում ենք մի կարևոր վայրի մասին, որը, ասում են, գտնվում է Հայաստանի մայրաքաղաք Երևանի հարավի աննշմար մի հետնաբակում: Այնտեղ մենք կտվորենք, որ աղոթատեղիների շուրջ վեճը միայն աննշան առնչություն կարող է ունենալ կրոնի հետ:



2021 թ. հունվարին Հայաստանի մայրաքաղաք Երևանից տեսարան դեպի Արարատ լեռը: (imago / age fotostock / Walter Bibikow)

Ամարասի վանքում մենք իմացանք հայերի մտահոգության մասին իրենց մշակութային ժառանգության համար: Այստեղ՝ Հայաստանի մայրաքաղաքի՝ բնակելի համալիրներով շրջապատված այս հետնաբակում, սկսվում է մեր որոնումն այն բանի ուղղությամբ, թե ինչ տառապանքներ են կրել ադրբեջանցիները: 30 տարի առաջ՝ 1990 թ. հունվարի 21-ին, այստեղ հրկիզվեց մի մզկիթ: Ասում են, որ ոստիկանությունը փորձել է կանգնեցնել ամբոխին: Բայց

հրդեհի գիշերվա առավոտյան բուլդոզերը կարողացավ հեռացնել միայն Հաճի-Չաֆար-Բեկ մզկիթի փլատակները:

«Այն շատ հին մի մզկիթ էր, որը մասամբ ծածկված էր կավով, վերևում այն ուներ այդպիսի կլոր մի տարր: Այն ես դեռ հիշում եմ»:

Մենք ստիպված չենք երկար սպասել, մինչ մի բնակչուհի դուրս գա տների բազմաթիվ մուտքերից մեկից: Յուլիան 65 տարեկան է և, երևում է, շուկայի ճանապարհին է: Նա տասնամյակներ ի վեր ապրում է Վարադանաց 22 հասցեում և լավ հիշում է այն գիշերը, երբ մզկիթն այրվեց:

«Երբ Օպերայի մոտ սկսվեցին բողոքի ցույցերը, և Լեոնային Ղարաբաղի համար մարդիկ փողոց դուրս եկան, մահմեդականները, որոնք նախապես ապրում էին այստեղ, փախան: Նրանք մեկնեցին: Երբ խառնաշփոթը սկսվեց, տեղի ունեցավ դեպքը մզկիթում»:

1980-ական թթ. վերջին շարունակ սաստկացող հակամարտության հետ մեկտեղ սկսվում են արտաքսումները: Տարիների ընթացքում լինում են հարյուր հազարավոր ադրբեջանցիներ, որոնք փախչում են Հայաստանի կողմից տիրապետվող տարածքներից և հարյուր հազարավոր հայեր, որոնք թողնում են Բաքուն և այլ քաղաքներ: Յուլիայի համար Երևանում մզկիթի ավերումը հետևում է գրեթե Հին Կտակարանի տրամաբանությանը:

«Այստեղի բնակիչներն էին, որ դա արեցին: Տղաները... նրանք, ահա, այդ միտքն ունեին: Կարծում եմ՝ ճիշտ են արել: Թշնամին ավերում է մեր հուշարձաններն ու եկեղեցիները և նաև՝ գերեզմանատները: Հետևապես, լավ բան էր, ինչ նրանք արեցին»:

Մզկիթը հրդեհվում է, մարդիկ փախչում են: Բայց 65-ամյայի խոսակցական տոնը թույլ է տալիս, որ իր հարևանների հրկիզումը հնչի երեխայական հնարքի պես: Երբ նա շարունակեց ճանապարհը, մենք թարգմանչից հարցնում ենք՝ արդյո՞ք նա սխալ չի լսել: Նա թափահարում է գլուխը:

Հնագետների և պատմաբանների պատերազմ

«Այս հակամարտությունում հարցը վերաբերվում է ոչ միայն ընթացիկ քաղաքականությանը, այլ նաև՝ ինքնությանը: Խոսքն անցյալի մասին է: Խոսքը պատկանելության մասին է: Խոսքը օրինականությունների մասին է»:

Սա բրիտանացի լրագրող Թոմաս Դե Վաալն է՝ տարածաշրջանի ամենահայտնի գիտակներից մեկը: Վերջին երկու տասնամյակների ընթացքում նրա «Սև պարտեզ» («Black Garden») գիրքը վեր է ածվել ստանդարտ աշխատանքի նրանց համար, ովքեր ցանկանում են հասկանալ Լեոնային Ղարաբաղի հակամարտությունը: Երբ մենք նրա հետ խոսում ենք հայերի՝ իրենց եկեղեցիների ու վանքերի համար վախի և ամբողջովին այրված մզկիթի մասին, նա մեզ պատմում է պատերազմի թիկունքում պատերազմի մասին: Այն դեկավարվում է ոչ թե զինվորների ու զենքավորների, այլ՝ հնագետների ու պատմաբանների կողմից:

«Հակամարտության յուրաքանչյուր կողմ պայքարում է ոչ միայն ներկայի, այլ նաև՝ անցյալի համար. այն բանի շուրջ, թե ով էր այստեղ առաջինը, թե ում կողմից են կառուցվել պատմական շենքերը: Այս կովում խոսքն ավելիի, քան քաղաքականության մասին է: Դա պայքար է մտավորականների, պատմաբանների և հնագետների միջև, տոտալիտար պայքար ոչ միայն ներկայի, այլ նաև անցյալի համար»:

Անցյալ, որն առանց այդ էլ կոմպլեքս է Կովկասում: Կովկասը, որը շրջանակված է արևմուտքում Սև ծովի և արևելքում Կասպից ծովի միջև, Եվրոպայի և Ասիայի միացման վայր է և մեծ կայսրությունների հետնաբակ: Այսօր տարածաշրջանը տիրապետվում է հյուսիսում Ռուսաստանի, արևմուտքում Թուրքիայի և հարավում Իրանի կողմից՝ իբր Խորհրդային միության, Օսմանյան կայսրության ու Պարսկաստանի ժառանգների: Այս մեծ կայսրությունների բազմակողմանի ազդեցությունները և գերակայության համար նրանց պայքարը սկզբից ի վեր Կովկասը դարձնում են էթնիկական կարկատան գորգ:



Մահմեդական Մուհարրամի երթը Շուշայում: Շուրջ 1865 թ. գրաֆիկական պատկեր՝ Վասիլի Վ. Վերեստշագինի կողմից, Մոսկվա, պետական Տրետյակովյան պատկերասրահ: (picture alliance/ dpa /akg-images)

20-րդ դարի սկզբին Լեռնային Ղարաբաղում ապրում են ամենից առաջ էթնիկ հայեր, որոնք, սակայն, կիսում են երկիրը ադրբեջանական զգալի փոքրամասնության հետ: Մեկը Լեռնային Ղարաբաղը՝ իր եկեղեցիներով ու վանքերով, համարում է իր ինքնության մաս, մյուսը՝ ամենից առաջ Շուշա քաղաքը՝ որպես սեփական մշակույթի աղբյուր: Եվ այսպես, Լեռնային Ղարաբաղին վերահսկելու համար պայքարը սկսվում է 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո, երբ երկու երկրները կարճ ժամանակով անկախացան:

Դա հակամարտություն է, որը կարճ ժամանակ անց, Հայաստանի ու Ադրբեջանի՝ Խորհրդային միությանը միանալու պատճառով, միայն սառեցվում է, բայց չի լուծվում: «Մև պարտեզը» Մոսկվայի կողմից տրվում է Ադրբեջանական ԽՍՀ-ին և այդ պատճառով մինչև այսօր Բաքվի պետական տարածքի մի մասն է. հանգամանք, որի հետ չեն ցանկանում հարմարվել այնտեղ բնակվող հայերը սկզբից նեթ:

1988 թ. փետրվարի 20-ին, երբ մարզխորհուրդը պահանջում է միացում Հայկական ԽՍՀ-ին, իրավիճակը սրվում է: Տարածաշրջանում Մոսկվայի նվազող ազդեցությունը չի կարողանում խանգարել, որ ԽՍՀՄ կոլլապսի հետ հակամարտությունը վերածվի բացահայտ սպանդի: Մինչ Հայաստանը 1994 թ. պատերազմը վճռեց իր օգտին և գրավեց Լեռնային Ղարաբաղը, ինչպես նաև՝ շրջակա տարածքները, տասնյակ հազարավորները մահացան և ավելի քան մեկ միլիոն մարդ արտաքսվեց:

Բղիլիան մուրեցնում է

Եթե այդտեղ չլինեին ռուսական անվավոր տանկերը, առիթը կարող էր ծագել մի բացիկից: Գտնվելով լեռան կես բարձունքին՝ Դադիվանքը նայում է խորը կտրված հովտին՝ Կովկասի սրտում: Վանքն իր խաչապատ գմբեթներն ու աշտարակները հպարտորեն ձգում է դեպի մոխրագույն երկինք: Բայց մոտեցնող ճանապարհին դեպի վեր յուրաքանչյուր քայլով ավելի պարզ է դառնում, որ այստեղ ինչ-որ բան այն չէ:

Վանքի բակում հանդիպում ենք ամբողջովին հյուծված Մովսես Սարգսյանին: Նրա պարանոցից ծանր կախված է Հայ առաքելական եկեղեցու երկաթե խաչը: Որպես պատերազմող քահանա՝ Տեր Հայրը պատերազմն անցկացրել է առաջնագծում. իրատ են կարդացել զինվորների համար, պողպատե սաղավարտներում լցրել օրհնած ջուր և դեռ մարտից առաջ մկրտել տղամարդկանց: Իգուր:

«Դադիվանքը Հայաստանի ամենահին վանքերից է և հայտնի ուխտատեղի: Ինչպես տեսնում եք, շատ այցելուներ գալիս են աղոթելու: Նրանք այցելում են վանք, քանի որ այն մեծ նշանակություն ունի մեզ համար: Բայց արդյո՞ք աշխարհը, իսկապես, հետաքրքրված է այս եկեղեցով: Դա է հարցը: Չգիտեմ՝ արդյո՞ք նա, իսկապես, հետաքրքրված է: Ով էլ որ լինի, ես նրան խորհուրդ եմ տալիս դրա պատմությունն ուսումնասիրել: Հարյուրամյակներ ի վեր այս հողը պատկանում է Հայաստանին: Հազարավոր տարիներ ի վեր մենք ապրում ենք այստեղ»:

Սարգսյանի ետևում՝ վանքի մատուռից տեսնում ենք տղամարդկանց ու կանանց, որոնք դուրս են գալիս կարմրած աչքերով: Նրանք լուսանկարում են հին քարերը, իրանց ընկերներին և իրենք իրենց: Նրանց նկարները ցույց են տալիս հրաժեշտ տվող մարդկանց լուրջ դեմքերը:

Վաղը Քելբաջար (Kəlbəcər) վարչական շրջանը կհանձնվի Ադրբեջանին: Այդպես է նախատեսում հրադադարը: Ոչ ոք չգիտի, թե ինչ է կատարվում Դադիվանքի հետ: Արդյո՞ք ռուս զինվորները խոսքը կպահեն և կպաշտպանեն վանքը: Եվ ի՞նչ, եթե ոչ: Թոմաս դե Վաալը բացատրում է, թե ինչու են շատ հայեր երկյուղ կրում իրենց վանքերի համար:

«Տարածաշրջանում ամենուր՝ եկեղեցիների և խաչքարերի վրա, գտնվում են հայկական պատմական արձանագրություններ: Ահա, ադրբեջանցի մի քանի պատմաբաններ ունենին ուշադրության արժանի մի մտահղացում, որ 19-րդ դարից ավելի հին հայկական բոլոր հուշարձանները ոչ թե հայկական են, այլ՝ կովկասյան-ալբանական. քրիստոնյա մի ժողովրդի վկայակոչում, որը մի ժամանակ ապրում էր այսօրվա Ադրբեջանի պետական տարածքում, և որը, ըստ էության, 6-րդ դարից ի վեր չկա, և որից դժվար թե ինչ-որ բան մնացած լինի: Տարածքը փաստացիորեն ապահայկականացվում է»:

Յուրաքանչյուր կողմ ունի իր պատմական բացատրությունը

Հայերի, ինչպես Ամարասի վանքից հայր Մովսես Սարգսյանի կամ նաև Կառլեն Նազարյանի համար վտանգված է իրենց ժողովրդի մշակութային ինքնությունը: Նրանք վախենում են, որ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող վանքերին ու եկեղեցիներին սպառնում է ավերածությունը:

Բայց դե Վաալը գիտի, որ սա մեղալի միայն մի կողմն է: Հայ պատմաբանները, հետևելով հակամարտության դիալեկտիկային, մշակել են համեմատաբար կամայական հեռանկար թշնամի Ադրբեջանի վերաբերյալ և մասսայականացրել բնակչության մեջ:

«Եթե Դուք որոշեցիք Ադրբեջանի մասին հայերի կողմից գրված պատմական գրքեր կարդալ, ապա կա այս՝ իսկապես ուշադրության արժանի արդյունքը. կարող եք կարդալ ամբողջ գիրքը և հավատալ, որ իրականում Ադրբեջան չկա: Նշվում է, որ երկիրը 20-րդ դարի գյուտ է, և յուրաքանչյուր ոք, ով նախապես ապրել է այնտեղ, թուրքական ծագմամբ քոչվոր է: Այդպիսով պատմության կարևոր գլուխն ամբողջությամբ մերժվում է»:

Մենք մտախոհ հեռանում ենք Դադիուանքից: Գավառի հանձնմանը հետևածի նկատմամբ հայերի վախը կոնկրետ ինչո՞վ է տարբերվում այն բանից, ինչն ադրբեջանցիները ստիպված էին կրել այստեղ 1990-ական թթ. սկզբին: Եվ ի՞նչ հակամարտության մասին է խոսքը. հակամարտություն, որում երկու կողմերն էլ մերժում են ոչ միայն մեկմեկու երկիրը և, այսպիսով, տեղը ներկայում, այլև՝ հավասարապես ամբողջ պատմությունն ու, դրանով, նաև անցյալը:



2020 թ. նոյեմբերին Շուշա քաղաքի մուտքը հսկվում է ռուս զինվորների կողմից: (imago / Itar-Tass / Stanislav Krasilnikov)

Մենք մի քաղաքի ճանապարհին ենք, որը, ինչպես Լեռնային Ղարաբաղի բոլոր վայրերը, երկու անուն է կրում: Հայերն այն անվանում են Շուշի, ադրբեջանցիները՝ Շուշա: Երկու կողմերն այն գոհար են համարում: Փոքր քաղաքի պատմական ամրոցը՝ լեռան բարձրության վրա, նայում է շրջակա ձորերին: Մեր ամենագնացը չարչարանքով մղվում է դեպի ճանապարհին ի վեր, որը պատերազմի ընթացքում ծածկված էր դիակներով:

Չնայած տեխնիկական գերազանցությանը՝ ադրբեջանական բանակը արյան բարձր գին վճարեց, մինչ վերջապես գրավեց քաղաքը: 1990-ական թթ. սկզբից՝ իրենց նվաճումից ի վեր, հայերը շատ խորն էին թաղվել: Մենք կանգ ենք առնում ճանապարհի եզրին և նայում մեր շուրջը: Ճամփեզրի նոնակի բեկորները, կրակված սաղավարտները և բանակային սառած պինդ բաճկոնները պատմում են պատերազմի թշվառության մասին:

Հենց այնտեղ գտնում ենք մի կտոր թուղթ, որը կիսով չափ ծածկված է մակարդված արյունով: Դա ադրբեջանական Գյանջա քաղաքից աշակերտուհի Լամիյայի նամակն է: Նա այն ձոնել է իր հայրենիքի զինվորներին:

«Բարև՛, զինվո՛ր: Ես չեմ հարցնում, թե ինչպես ես, քանի որ վստահ եմ, որ լավ ես: Զինվորը, որը պաշտպանում է երկիրը և խիզախում նրա համար, այլ կերպ չի կարող լինել: Մենք հպարտ ենք ձեր բոլորով»:

Մենք շարունակում ենք ճանապարհը, բայց ճանապարհը դեպի Շուշա մեզ համար մնում է արգելված: Ռուսական տանկերն ու ադրբեջանցի զինվորները կանգնած են քաղաքի ելքի առաջ: Մենք կարողանում ենք հստակորեն որոշել Մայր տաճարի աշտարակները:

2019 թ. տեղի ունեցավ ֆուտբոլի ևս մեկ մրցաշար

Օանոթ տեսարան է, քանի որ 2019 թ. ամռանը մենք արդեն մեկ անգամ ճանապարհորդել ենք Լեռնային Ղարաբաղում: Այդ ժամանակ Հայաստանի կառավարչությունը կազմակերպել էր ֆուտբոլի միջազգային մրցաշար և հրավիրել լրագրողներին:

Անցյալ ձմեռվա մի տեսանյութում Շուշայի տանիքների վերևում 1992 թ. ի վեր առաջին անգամ հնչում է իսլամական ադոթքի կանչը: Ընդունելության պահին ադրբեջանական բանակը հենց նոր է ետ գրավել քաղաքը: Մենք ճանաչում ենք տեսանյութում երևացող մզկիթները: Դրանք մենք հայտնաբերել ենք մեր ճեմուղիների վրա 2019 թ. ամռանը: Խոսքը ստորին և վերին Գովար աղա մզկիթի մասին է: Երկուսն էլ համարվում են թուրք-ադրբեջանական ճարտարապետության արտահայտություն:

Ստորին, լեռան մի փոքր խորքում ընկած շենքն այդ ժամանակ ամբողջովին ծածկված էր: Մենք հայտնաբերում ենք այն ընդհանրապես միայն, որովհետև մինարեթները դեռ կանգնած էին: Ներսում գտանք ադոթասրահի պուլների մեջ փորագրված խաչ, հատակին՝ աղբ ու տեղ-տեղ կեղտոտված պատեր: Երկրորդ մզկիթի՝ վերևում գտնվող աշտարակները փայտամած էին ու վերանորոգվում էին: Այնտեղ մեր այցելությունից մի քանի շաբաթ անց Ադրբեջանի բողոքի ներքո մզկիթը աշխարհին ներկայացվում է որպես պարսկական ճարտարապետության օրինակ:



1992 թ. մարտի 3-ին Ստեփանակերտից՝ Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքից, հայ փախստականները տարհանվեցին : (picture-alliance / dpa / epa)

1994 թ. պատերազմի ավարտով Հայաստանը վերահսկողություն է ձեռք բերում ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլ նաև՝ շրջակա յոթ վարչական շրջանների վրա: Մեկ հարվածով Բաքուն կորցնում է իր պետական տարածքի շուրջ 14 տոկոսը և ստիպված է ապահովել հարյուր հազարավոր փախստականների մատակարարումը: Թվում է՝ ոչինչ ավելի ծանր չի

կշռում, քան Շուշայի կորուստը: Վերջիվերջո գերակշիռ մասով աղբբեջանցիներով բնակեցված քաղաքը երգիչների ու բանաստեղծների ծննդավայրն է, համարվում է մշակույթի օրրան:

Այսպիսով, ատելությունն աճում է, նաև՝ այն պատճառով, որ ավելի ու ավելի շատ մանրամասներ են հայտնաբերվում Խոջալու քաղաքի սպանդի մասին: 1992 թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը հայ զինվորները, խորհրդային աջակցությամբ, ներխուժեցին փոքրիկ վայրը և ջարդեցին հարյուրավոր աղբբեջանցիների, այդ թվում՝ երեխաների: Հայաստանի առաջվա նախագահ Սերժ Սարգսյանի՝ ավելի ուշ ժամանակի արտահայտությունները հասկացնել են տալիս, որ կոտորածը ծրագրված ռազմական հանցագործություն էր:

Քաղաք-ուրվական Աղդամ

Շուշայում հետքեր որոնելուց մի քանի օր անց մենք վաղ առավոտյան տաքսի նստեցինք: 2019 թ. հունիսն էր, և արդեն հաղորդվում էր օրվա տաքությունը: Մեր վարորդը միացրեց մեքենայի ռադիոն, բացել էր պատուհանները և լավ տրամադրության մեջ էր: Նա իր հյուրերին բերեց Աղդամ՝ քաղաք-ուրվական՝ Լեռնային Ղարաբաղից արևելք՝ հայերի կողմից գրավված բուֆերային գոտում:

Պատերազմից առաջ Աղդամում ապրում էր 30.000 մարդ: Նրանց մեծագույն մասը աղբբեջանցի էր: Անկման ու թալանի տասնամյակները քաղաքը վերածել են ավերակների բնապատկերի: Երբ մենք մեկնեցինք Աղդամ, Հայաստանի ու Աղբբեջանի միջև ռազմաճակատն անցնում էր այստեղից ոչ հեռու: Առանց զինվորականների թույլտվության՝ քաղաք մուտք գործելն արգելված էր, ինչը, սակայն, մեր տաքսու վարորդին կարծես չէր անհանգստացնում:

Արդեն հեռվից մենք տեսանք Աղդամի վերջին՝ լավ պահպանված շենքը՝ 19-րդ դարի մզկիթը: Մուտքն աղտոտված էր, Աստծո տան առջևի բաժան-բաժան արված ցուցանակը շենքը ներկայացնում էր իբրև «պարսկական մզկիթ»: Մինարեթի բարձունքից մենք տեսնում ենք այն, ինչ մնացել է Աղդամից՝ կոտորված քարերի ծով, մեջտեղում՝ արածող կովեր:

Հաղթանակի դիրքեր

Շուշայի աղոթքի կանչի պես Աղդամի մզկիթը նույնպես 2020 թ. հայտնվում է ցնձացող աղբբեջանցիների տեսանյութերում: Դրանք ցույց են տալիս, թե ինչպես են զինվորները ցախավելներով մաքրում գավիթը և հետո ծնկի իջնում՝ աղոթելու: Բայց նրանք չպետք է կանգ առնեն Աղդամի և Շուշայի մզկիթների ետ գրավման ուրախության վրա: Ինտերնետում արագորեն շրջանառվում են նաև այլ տղեղ պատկերներ: Դրանք ցույց են տալիս հայկական նվաճված գերեզմանատներ, որոնք պղծվում են:

Եթե միայն մահացածները կարողանային տեսնել: Վաղ առավոտյան մտնում ենք Եռաբլուր զինվորական գերեզմանատուն և միայն անհոժարությամբ ենք աչք կտրում Արարատի՝ ծագող արևի լույսով լուսավորված գագաթներից:

Մայրեր, դուստրեր, քույրեր, հայրեր, որդիներ և եղբայրներ կանգնած են երիտասարդ տղամարդկանց գերեզմանների առաջ:

«Հիշում ես, թե այդ մարաղացի վաճառականը, որը հաճախ էր գալիս այստեղ համեմունքներ, խուրմա, ծխախոտ, կոճապղպեղ և դարչին վաճառելու, ինչ ասաց իր վերջին

այցի ժամանակ՝ հայերի ջարդից առաջ: Դեռ շատ ուշ չէ, լքի՛ր այս վայրը», - ասում է նա: Մարդը չի կարող կարիքից գերծ ապրել այնտեղ, որտեղ այդքան շատ գերեզմանատներ կան»:

Այս բառերը գրեց Աքրամ Այլիսլին: Ադրբեջանցի հեղինակն այն ասում է իր «Քարե երազներ» վեպի մի կերպարի բերանով: Գերեզմանոցներ. Այլիսլին գիտի դրանց՝ հայերի համար կարևորության մասին: Այլիսլին ծնվել է Նախիջևանի ադրբեջանական էքսկլավում: Այն բանից հետո, երբ 1990-ական թթ. սկզբին Առաջին պատերազմում Հայաստանը գրավեց Լեռնային Ղարաբաղը և շրջակա տարածքները, պարտվողները վրեժխնդիր եղան և ավերեցին Ջուլֆայի գերեզմանատան հարյուրավոր խաչքարեր:

«Այլիսլում ոչ մի մարդ, ով այդ ժամանակ ցանկանում էր հայերի դեմ բռնության միջոցով բարելավել իր կյանքի պայմանները, մինչ օրս հանգիստ չի ճանաչում: Երեխաները, ահա, քավում են իրենց ծնողների գործած մեղքերը: Նրանց հոգիները, ում մենք տանջել ենք, թույլ չեն տալիս մեզ հանգիստ ապրել»:

Հիշողություն հայ ժողովրդի տառապանքի մասին

Աքրամ Այլիսլիի նկատառելի կարիերան ավարտվում է նրա «Քարե երազներ»-ի այս և նման տողերով: Հակամարտության երկու կողմերում չկան շատ մարդիկ, ովքեր, ինչպես ադրբեջանցի հեղինակը, նշում են նաև սեփական կողմի հանցանքները: Բայց Այլիսլին գրում է իր հայրենիքի ավերված եկեղեցիների և գերեզմանատների մասին և դառնում է հասարակական վրդովմունքի խաղաղակալ: Նրա գրքերը այրվում են, պատվավոր կոչումները հետ են կանչվում և գլխազին է սահմանվում նրանց համար, ովքեր կկտրեն նրա սկանջը:

Այլիսլին հիշեցնում է, որ հայ ժողովուրդը հետադարձ հայացք է նետում պատմությանը՝ լի ցավով ու արտաքսումով: Դրանում առանցքային է երիտթուրքերի 1915 թ. ցեղասպանությունը: Ցրված ամբողջ աշխարհում և հայրենիք փնտրելով՝ աճում է գիտելիքը սեփական գոյության դյուրաբեկության մասին: Հայերի մեծամասնությունը ադրբեջանցիներին պարզապես անվանում է թուրքեր և, ահա, ցեղասպանության սարսափը երկարաձգվում է մինչև ներկա ժամանակաշրջան:

«Երևանը թաքցնում է իր տարիքը: Քաղաքն իր կենտրոնում սին զարդարվում է ուղղաձիգ շքեղ փողոցներով, թաքցնում իր կնճիռները գրասենյակային նոր աշտարակների հայելային ճակատների ետևում, պարծենում ջանասիրաբար վերանորոգված քաղաքային բնակարաններով և եվրոպական դիզայներական ապրանքներով լի բուտիկներով: Եվ այսպես, Մարկ Գրիգորյանի պես քաղաքային ուղեցույցի ցուցումն է պետք՝ նեղ աստիճաններն ի վեր հին քաղաքի Կոնդ թաղամասը գտնելու համար: Նա խոստացավ մեզ ցույց տալ պատմական Երևանը»:

Ճարտարապետության թանգարանի տնօրենը քաղաքը գիտի այնպես, ինչպես ոչ ոք: Պղծված գերեզմանոցներ և ավերված եկեղեցիներ, այրված և կիսավեր մզկիթներ. մենք ցանկանում ենք Գրիգորյանից իմանալ, թե արդյոք աշխարհի այս մասում քրիստոնյաների և մահմեդականների համագոյակցությունը միշտ այսպիսի տեսք է ունեցել:

«Որքան կարող եմ ասել, լավ կյանք կար (քրիստոնյաների և մահմեդականների միջև): Դրանք խաղաղ թաղամասեր էին: Երկու կողմերն օգուտ են քաղել միմյանցից: Հայ եկեղեցում կային հիվանդների մահճակալներ: Մահմեդականները կարող էին գնալ այնտեղ և բուժվել: Գեղեցիկ այգիները շրջապատում էին եկեղեցիներն ու մզկիթները, մարդիկ հաճույքով այնտեղ անցկացնել են իրենց ազատ ժամանակը, առանձնապես երեկոյան ժամերին, երբ արևը մայր էր մտնում: Չկա պատմական ապացույց այն մասին, որ այս քաղաքում մինչև 20-րդ դարի սկիզբը լուրջ խնդիրներ կային քրիստոնյաների և մահմեդականների միջև»:

«Երրորդ պատումի» հնարավորությունը

Եվ ապա Մարկ Գրիգորյանը պատմում է, թե ինչպես է անցյալ դարի 30-ական թթ. մտավորականությունը՝ գրողներ, նկարիչներ, կոմպոզիտորներ, բժիշկներ և դոկտորներ, հավաքվել Երևանի Կապույտ մզկիթի պարտեզներում: Դա ժառանգություն չէ՞, որն արժե ընդգծել. հարց, որը տալիս ենք նաև Թոմաս դե Վաալին մեր հետազոտության ավարտին:

«Պատմաբանները, վստահ, կարող էին դրական դեր խաղալ այս հակամարտությունում: Հնարավոր է իրադարձությունների մեկ այլ ներկայացում: Ես այն անվանում եմ երրորդ պատում: Դա կկարողանար մարդկանց միավորել: Բայց ամենից առաջ պետք է լինի մի տեսակ բանավոր հրադադար: Դա պետք է գա ամենավերևից, որպեսզի այն կարողանա հաջողել: Կարծում եմ՝ դա գիտեն նաև քաղաքական գործիչները: Ցավոք, հակամարտությունը շատ առումներով օգտավետ է նրանց»:

Աղբյուր՝ https://www.deutschlandfunkkultur.de/kulturkampf-zwischen-armenien-und-aserbajdschan-wer-hat-die.976.de.html?dram:article_id=495021